

Մրցույթների, աճուրդների կազմակերպումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը

Մրցույթներն անցկացվում են բաց, մրցույթին կարող է մասնակցել ցանկացած անձ: Մրցույթները կազմակերպում և անցկացնում են մրցութային հանձնաժողովները:

Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

1. հայտ
2. մասնակցութան համար վճարի անդորրագիր
3. անձնագիր:
4. Մրցույթի մասնակիցները մրցույթին մասնակցելու համար դրա անցկացման մասին ծանուցման մեջ նշված չափով մուծում են նախավճար, որի գումարը չի կարող գերազանցել մրցույթի առարկայի նախնական գնի 5 տոկոսը:

Նախավճարը մուծվում է մրցույթի անցկացման օրը:

Եթե մասնակիցը մրցույթում չի հաղթել, ապա նախավճարի գումարը վերադարձվում է նրան:

Մրցում հաղթած անձի հետ պայմանագիր կնքելիս նրա մուծած նախավճարի գումարը հաշվարկվում է կնքված պայմանագրով պարտավորություններին կատարման հաշվում:

Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են

1. հայտ
2. մասնակցութան համար սահմանված չափով վճարի անդորրագիր
3. անձնագիր
4. Աճուրդի մասնակցութան հայտը չի ընդունվում, եթե հայտ ներկայացողը սույն օրենսգրքով սահմանված հողամասի սեփականութան իրավունքի սուբյեկտ չէ:
5. Աճուրդի մասնակիցներն աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: